

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«04» ՄԱՅԻՍԻ 2015 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

ԲԱԳՐԱՏ ՂԱԶԻՆՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը հաստատելու մասին» N 436-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետի «դ» ենթակետով և 5-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2015 թվականի ապրիլի 30-ի N 02/13/2/1542-15 գրությունը և Բ. Ղազինյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի օրենսդրության զարգացման և իրավական վերլուծությունների վարչության պետի (ծածկագիր՝ 14-2.1-15) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Բագրատ Վաչագանի Ղազինյանի հետ 2015 թվականի մայիսի 4-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ